

ТУРИЗМ

**Էկոզբոսաշրջութեան զարգացման հնարավորութիւնները
ՀՀ-ում՝ Կալավան գյուղի օրինակով**

Միմոնյան Ա. Հ.

*ՀՀԳՏՀ կառավարման անբիռնի մագիստրանտ (Երևան, ՀՀ)
mayis.simonyan01@gmail.com*

Հանգուցարառեր՝ Էկոզբոսաշրջութիւն, Էկոզբոսաշրջիկ, ԲՀԳՏ (բնութեան հատուկ պահպանվող տարածք), Կալավան

Возможности развития экотуризма в Армении на примере села Калаван

Симонян А. А.

*Армянский государственный экономический университет (Ереван, РА)
mayis.simonyan01@gmail.com*

Аннотация: В настоящее время практически все страны мира руководствуются принципами устойчивого экотуризма, отчётливо осознавая, что для развития этого вида туризма в своей стране необходимо охранять и сохранять естественные богатства и природные ресурсы этого края, на мониторинговой основе осуществлять анализ состояния этих ресурсов, чтобы достойным образом передать право пользования этим добром последующим поколениям.

Внедря международный опыт экотуризма в Армении, можно сделать шаг к его устойчивому развитию, так как Армения имеет большой потенциал и возможности быть первой в регионе по уровню развития этого вида туризма учитывая её климатических условия, богатый природный мир, разнообразие флоры и фауны, гостеприимство населения, которое всегда привлекало туристов со всего мира.

Устойчивое развитие экотуризма способствует экономическому росту страны, сохранению окружающей среды, повышению порога материальной состоятельности населения и взаимному признанию культурных ценностей.

Вышеупомянутый экотуризм позволяет населению страны чувствовать себя гражданином мира. Как интересный объект экотуризма, мы провели анализ для села Калаван и показали препятствия и перспективы развития экотуризма в Калаване.

Ключевые слова: экологический туризм, экотурист, охраняемая природная территория, Калаван

Opportunities for the development of ecotourism in Armenia, following the example of Kalavan village

Simonyan A. H.

*Armenian State University of Economics (Yerevan, RA)
mayis.simonyan01@gmail.com*

Abstract: Nowadays, almost all countries of the world understand the importance of the principles of sustainable tourism. They realize that in order to develop this type of tourism in their country, it is necessary to preserve the country's natural resources, conduct regular monitoring of those resources, and enable future generations to make use of those resources as well.

By introducing the international experience of ecotourism in Armenia, we can take a step towards sustainable development, as Armenia has great potential and opportunities to be the first in the region in terms of the level of development of sustainable tourism due to its climate, rich nature and biodiversity, which has always attracted tourists.

The sustainable development of eco-tourism contributes to the sustainable growth of the country's economy, preservation of the environment, overcoming poverty, and mutual appreciation of cultural values. The latter will allow the population of the country to feel like a citizen of the whole world.

As an interesting eco-tourism object, we conducted an analysis for the village of Kalavan and revealed the obstacles and prospects for the development of eco-tourism there.

Keywords: ecotourism, ecotourist, protected areas, Kalavan

Այսօր շատ երկրներում զբոսաշրջութիւնն արտարժուէթի և օտարերկրյա կապիտալի ներհոսքի գլխավոր աղբյուրներից է, ինչն էլ իր հերթին նպաստում է տնտեսութեան մյուս ճյուղերի զարգացմանը: Զբոսաշրջութիւնը,

իմելով տնտեսութեան աշխատատար ճյուղ, իրանում է զբաղվածութեան աճին, աղբատութեան մակարդակի նվազեցմանը: Այս ամենով պայմանավորված՝ զբոսաշրջութիւնը, հատկապէս զարգացող երկրների համար ձեռք բերելով

սոցիալ-տնտեսական նշանակություն, պահանջում է ոլորտի զարգացմանն ուղղված տարատեսակ քաղաքականությունների մշակում և դրանց արդյունավետ իրագործում:

Չնայած նրան, որ զբոսաշրջային այցերը սովյալ երկրին ապահովում են եկամտային մեծածավալ հոսքերով, այնուամենայնիվ, ունենում են նաև որոշակի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ինչին էլ վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձվում պետությունների կողմից: Չբոսաշրջության զարգացումը ուղեկցվում է շրջակա միջավայրի հետ ակտիվ փոխազդեցությամբ՝ վերջինիս վրա թողնելով և՛ դրական, և՛ բացասական հետևանք: Բացասական հետևանքի մեղմման նպատակով զարգացած շատ երկրներ յուրջ միջոցառումներ են ձեռնարկում, ինչը իրատեսական չէ զարգացող երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի դեպքում, քանի որ բացակայում են ֆինանսական անհրաժեշտ միջոցները, նաև առկա են սոցիալական բազմատեսակ հիմնախնդիրներ, որի պատճառով էլ տարիներ շարունակ ականատես ենք եղել անտառահատումների, կենդանի աշխարհի ոչնչացման, բնական ու պատմամշակութային արժեքների վերացման:

Բնական միջավայրի խարխյումը իր հետ բերում է նաև զբոսաշրջային արդյունաբերության անկում, իսկ զբոսաշրջության և բնական միջավայրի փոխադարձ կապը հիմնականում հանգում է հետևյալին.

- Չբոսաշրջությունը պատճառ է դառնում շրջակա միջավայրի աղտոտման (զբոսաշրջության նպատակներով բնական ռեսուրսների օպտիմալ օգտագործում),

- Չբոսաշրջությունը պահպանում է շրջակա միջավայրը (բնության և մշակութային հուշարձանների պահպանում և պաշտպանում, զբոսաշրջիկների մեջ բնապահպանական հանդուրժողականության դաստիարակում, զբոսաշրջային ծառայությունների մատուցում և այլն) [1, էջ 27]:

Եվ հենց այս ամենով պայմանավորված (զբոսաշրջիկների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա)՝ առաջացան էկոզբոսաշրջության սաղմերը: Մի շարք գյուղատնտեսական հիմնախնդիրների հետ մեկտեղ (կլիմայական փոփոխություններ, կենսաբազմազանության կրճատում և այլն) դասական զբոսաշրջությունը իր տեղը զիջեց զբոսաշրջության ժամանակակից, այլընտրանքային տեսակներին, կարևորվեց կայուն զարգացման գաղափարը, քանի որ վերջինիս շնորհիվ ավելանում են այն զբոսաշրջիկների թվաքանակը, որոնք հարգանք ունեն շրջակա միջավայրի, համայնքների կողմից ստացված տնտեսական օգուտների և սոցիալական խնդիրների նկատմամբ [2, էջ 671]:

Կայուն զարգացման մասին սկսեց խոսվել 1987-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում: Հետագայում Ռիո դե Ժանեյրոյում 1992 թ. Ռիոյի հռչակագրով սահմանվեցին կայուն զարգացման 27 սկզբունքներ և գյուղատնտեսությանը գործողությունների երկարաժամկետ ծրագիր («Օրակարգ 21») [3, ժ. 32], իսկ արդեն փոքր-ինչ ուշ վերջնականապես ընդունվեց *կայուն զարգացման հռչակագիրը* [4]:

Ըստ ՉՀԿ սահմանման՝ **կայուն զբոսաշրջությունը** զբոսաշրջության տեսակ է, որը լիովին հաշվի է առնում իր ներկա և ապագա տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունները, որոնք վերաբերում են այցելուների, տեղական արդյունաբերության, շրջակա միջավայրի և ընդունող համայնքների կարիքներին [5, էջեր 11-12]:

Կայուն զբոսաշրջությունը միտված է շրջակա միջավայրի ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը, համայնքների սոցիալ-մշակութային յուրօրինակության պահպանմանը, մի շարք սոցիալական հիմնախնդիրների լուծմանը, մասնավորապես՝ աղքատության մակարդակի նվազեցում, կայուն զբաղվածության ապահովում և այլն:

Նախքան էկոզբոսաշրջություն եզրույթի ի հայտ գալը այն նույնացվում էր կայուն զբոսաշրջության հետ: Մակայն էկոզբոսաշրջությունը կայուն զբոսաշրջության միայն մի մասն է, աշխարհում զբոսաշրջության մեծ պահանջարկ վայելող ճյուղերից է, և այս եզրույթը գիտական շրջանառության մեջ է դրվել բոլորովին վերջերս՝ 1983 թ., Հելտոր Ցեբալոս-Լասկուրեյնի կողմից: Ըստ նրա՝ *էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության այնպիսի տեսակ է, որը ենթադրում է ճանապարհորդություն դեպի համեմատաբար պահպանված բնական տարածքներ՝ բնաշխարհն ու դրա վայրի բույսերն ու կենդանիները ուսումնասիրելու, հիանալու ու վայելելու, ինչպես նաև բացահայտելու սովյալ տարածքներում գոյություն ունեցող մշակութային արժեքները* [6]: Առավել կարճ ձևակերպմամբ՝ էկոզբոսաշրջությունը ճամփորդություն է «բնության մեջ» [7, էջ 7]:

Միջազգային փորձում էկոզբոսաշրջային հիմնական երթուղիներն անցնում են հենց բնության հատուկ պահպանվող տարածքներով: ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարուստ կենսաբազմազանությունը, բազմաբնույթ գեղատեսիլ լանդշաֆտային տիպերը, բնապատմական ժառանգությունը և պատմամշակութային բազմաթիվ հուշարձանների առկայությունը հնարավորություն են տալիս կազմակերպելու զբոսաշրջության տարբեր ձևեր, համակցված տուրեր և արշավներ [8]:

ՀՀ-ում ԲՀՊՏ-ները ունեն հետևյալ դասակարգումները.



Գծապատկեր 1. ԲՀՊՏ-ների դասակարգումը ՀՀ-ում [9]

ՀՀ-ում կան 3 պետական արգելոցներ, 4 ազգային պարկեր, 27 պետական արգելափայտեր:

ՀՀ ԲՀՊՏ-ները երկրի ողջ տարածքի գրեթե 13 %-ն են կազմում: ՀՀ-ում բնակվող 17500 կենդանիներից շուրջ 300-ը և 3800 բարձրորակ բույսերից 450-ը գրանցված են Կարմիր գրքում: Իսկ Կարմիր գրքում գրանցված կենդանիների 65 %-ը և բույսերի 36 %-ը գտնվում են ԲՀՊՏ-ներում [10]:

ՀՀ ԲՀՊՏ-ները ունեն էկոգրոսաշրջային լայն ներուժ, ինչի արդյունավետ օգտագործումը ենթադրում է եկամուտների զգալի ներհոսք:

Աղյուսակ 1. Էկոգրոսաշրջիկների թվաքանակը ՀՀ-ում 2016-2018 թթ. (կազմվել է հեղինակի կողմից: Տվյալները վերցված են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Էկոտուրիզմի աջակցության և զարգացման բաժնից):

ԲՀՊՏ	2016	2017	2018
«Խոսրովի անտառ» պետական արգելոց	635	802	1500
«Չանգեզուր» կենսոլորտային համալիր	421	1039	1122
«Սևան» ազգային պարկ	320000	350000	250000
«Դիլիջան» ազգային պարկ	100000	100000	120000
«Արփի լիճ» ազգային պարկ	110	1200	3300
«Չիկատար» բնապահպանական կենտրոն	250	290	340
Արգելոցապարկային համալիր «Սոճուտ» դենդրոպարկ	0	23264	36350
Չրոսաշրջիկների թվաքանակը ԲՀՊՏ-ներում	421416	476595	412792
Ներգնա գրոսաշրջիկների թվաքանակը ՀՀ-ում	1259657	1494779	1651782
Ներքին գրոսաշրջիկների թվաքանակը ՀՀ-ում	979968	1086707	1092322

2018 թ. ԲՀՊՏ-ներում էկոգրոսաշրջիկների թվաքանակը եղել է 412792, որն ավելի քիչ է, քան նախորդ տարիներինը (2016-ին եղել է 421416 էկոգրոսաշրջիկ, 2017-ին՝ 476595): 2019 թ. կրկին աճ է գրանցվել էկոգրոսաշրջիկների թվաքանակի առումով (439616)՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 26824 էկոգրոսաշրջիկով [11]:

2016 թ. արգելոցապարկային համալիր «Սոճուտ» դենդրոպարկում հաշվառում չի արվել (դա չի ենթադրում, որ տվյալ տարի դենդրոպարկ չի այցելել և ոչ մի գրոսաշրջիկ), այդ իսկ պատճառով աղյուսակի համապատասխան մասում գրված է 0:

Էկոգրոսաշրջությունից ստացված եկամուտները 2016-2018 թթ. ունեցել են հետևյալ տեսքը.


ԲՀՊՏ	2016	2017	2018
«Խոսրովի անտառ» պետական արգելոց	2356000	2034500	2550000
«Չանգեզուր» կենսոլորտային համալիր	20000	3748000	1686000
«Սևան» ազգային պարկ	-	-	-
«Դիլիջան» ազգային պարկ	422000	181000	52000
«Արփի լիճ» ազգային պարկ	215000	500000	1000000
«Չիկատար» բնապահպանական կենտրոն	2845000	1790500	1160000
«Սոճուտ» դենդրոպարկ	անվճար	անվճար	10405000
Ընդամենը	5858000	12921200	16853000

Աղյուսակ 2. ԲՀՊՏ այցելություններից ստացված եկամուտները 2016-2018 թթ. (դրամ) (կազմվել է հեղինակի կողմից: Տվյալները վերցված են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Էկոտուրիզմի աջակցության և զարգացման բաժնից):

Բերված եկամուտները ստացվել են Էկո-զբոսաշրջային տվյալ օբյեկտների մուտքավճարներից: 2016 և 2017 թվականներին «Սոճուտ» դեղդրոպարկում մուտքը անվճար է եղել: Ինչ վերաբերում է «Սևան» ազգային պարկին, ապա այստեղ շատ են հասարակական լողափերը, որոնցից կարող է օգտվել յուրաքանչյուր ոք առանց մուտքավճարի: Իսկ արդեն 2019 թ. Էկոզբոսաշրջությունից ստացված եկամուտները կազմել են 23878000 դրամ [11]:

Ընդհանուր առմամբ՝ զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները կապված են տարբեր գործոնների հետ՝ ենթակառուցվածքների թերզարգացվածությունից մինչև կոնկրետ միջոցառումների բացակայություն:

Էկոզբոսաշրջության առումով ՀՀ-ն ունի զարգացման յուրջ հեռանկարներ: Բայց այդ զարգացմանը խոչընդոտում են բազմաթիվ գործոններ, որոնցից ամենաառաջնայինները առանձնացրել ենք ստորև ներկայացված գծապատկերում.



Գծապատկեր 2. Էկոզբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող գործոններ (կազմվել է հեղինակի կողմից)

Շատ ԲՀՊՏ-ներ գտնվում են բնակավայրերից հեռու, և Էկոզբոսաշրջության բնականոն զարգացման համար անհրաժեշտ է Էկոզբոսաշրջային կայուն ենթակառուցվածքների առկայություն: Այս համատեքստում առավելապես կարևորվում է ճանապարհային ու արահետային ցանցի, հստակ առանձնացված կացարանների

ստեղծումը: Հաճախ բնության մեջ եղած մարդածին շինությունները բացասաբար են անդրադառնում շրջակա միջավայրի վրա: Երբեմն այդ համալիրները կառուցված չեն լինում բնական շինանյութերով կամ դրանց չափերը իշխում են բնական միջավայրի վրա:

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ ՀՀ ԲՀՊՏ-ներում Էկոզբոսաշրջությունը գործնական հիմքերի վրա դնելու նպատակով անհրաժեշտ են համապատասխան ենթակառուցվածքներ, հատկապես՝ ճանապարհային ցանց, որի զարգացման համար խիստ կարևոր է հստակ ձևակերպված երթուղու առկայությունը:

Լուրջ խնդիր են ներկայացնում նաև այն երթուղիները, որոնք իրականացվում են տրանսպորտային միջոցներով: ՀՀ-ում տարածված են ջիփինգ տուրերը, որի ժամանակ որպես տրանսպորտային միջոց ծառայում են ծանր մեքենաները, որոնց երթուղին ընթանում է բարձրլեռնային գոտիներով: Վերջինիս պատճառով ուղղակիորեն դեգրադացիայի է ենթարկվում տվյալ տարածքի բուսածածկույթը: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում խստագույնս սահմանափակել մեքենաների կամայական տեղաշարժը այդօրինակ տարածքներում:

Գրեթե ողջ աշխարհում Էկոզբոսաշրջությանը խոչընդոտող գլխավոր գործոններից մեկը աղքատությունն է: Վերջինս բնական միջավայրի անաղարտության պահպանման յուրջ սպառնալիք է: Շատ պետություններում աղքատ բնակչության ավելի քան 80 %-ը ապրում է Էկոլոգիապես անբարենպաստ միջավայրում: ՀՀ Էկոզբոսաշրջային շատ օբյեկտներ, որոնք անհամեմատ հեռու են գտնվում խոշոր բնակավայրերից, դժվարություններ են ունենում Էկոզբոսաշրջային հոսքեր ապահովելու գործում: Այդ պատճառով էլ տեղացիները այդ տարածքներում կառուցում են զվարճանքի օբյեկտներ, որոնք խաթարում են բնական միջավայրը:

ՀՀ Էկոզբոսաշրջային արդի վիճակը ուսումնասիրելիս մենք տեսնում ենք, որ մինչ օրս առաջընթաց չի գրանցվել կայուն զբոսաշրջության սերտիֆիկացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտար ձեռք բերել որոշակի ճանաչողություն և՛ տեղական, և՛ համաշխարհային շուկաներում մարքեթինգային գործունեության շնորհիվ՝ տարածելով զբոսաշրջային տարբեր տեղեկատվական նյութեր միջազգային ճանապարհորդական տոնավաճառներում և կայքերում: Սերտիֆիկացիայի շնորհիվ ապահովվում է անդամակցությունը բնապահպանական միջազգային միություններին և հնարավորություն է տրվում գովազդ տեղադրել միջազգային Էկոզբոսաշրջային հրատարակություններում: Սերտիֆիկացումը զբոսաշրջային

ծառայություններ մատուցողներին հնարավորություն է տալիս նաև իրականացնել կրթական ծրագրեր ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, շրջակա միջավայրին համահունչ վերականգնման հետ կապված, երաշխավորում է զբոսաշրջության սպասարկման բարձր որակ:

Բացի այդ այսօր ՀՀ-ում գրեթե չկան տեղեկատվական հատուկ վահանակներ տարածաշրջանի աշխարհագրական կոորդինատների վերաբերյալ, որոնք կուղղորդեին զբոսաշրջիկներին ճանապարհորդության ժամանակ: Ներկայումս առավել արդիական է այդ նույն տեղեկատվական վահանակների կիրառումը մեր ամենօրյա օգտագործման տեխնոլոգիաներում՝ հեռախոսային ծրագրեր ստեղծելով, որոնց մեջ զետեղված ամբողջական տեղեկատվության շնորհիվ հնարավորություն կտրվի հենց տեղում իմանալ զբոսաշրջիկին հուզող բոլոր խնդիրները, ներկայացնել ամբողջական տեղեկատվությունը և հարցերին օպերատիվ լուծում տալ:

Ընդհանուր հմտությունների և կարողությունների բացակայությունը կամ թերի առկայությունը նպաստում է նրան, որ ՀՀ-ը չի կարողանում պատշաճ բավարարել զբոսաշրջիկների, այդ թվում նաև՝ Էկոզբոսաշրջիկների բազմատեսակ պահանջմունքները և ակնկալիքները: Այս խնդրի լուծումը հատկապես կարևոր է ներգնա զբոսաշրջիկների հետ գործ ունենալիս, քանի որ օտար լեզուներով հաղորդակցվելու սահմանափակ կարողությունները խոչընդոտում են ներգնա զբոսաշրջիկների և տեղացիների շփումը (տաքսու, հանրային տրանսպորտի վարորդներ, զբոսաշրջային այլ ծառայություններ մատուցող անձինք): Չբոսաշրջության ոլորտի փորձագետները զգուշացնում են, որ զբոսավարների ստանդարտացման, նաև նրանց համար նախատեսված ուսումնական ծրագրի բացակայության պատճառով վերջիններս կարող են Հայաստանի մասին տարբեր պատմություններ պատմել: Սա հանգեցնում է նրան, որ զբոսաշրջիկները կարող են լսել Հայաստանի պատմության բազմաթիվ տարբեր մեկնաբանություններ, ինչը շատ դեպքերում բացասաբար է անդրադառնում Հայաստանի՝ որպես զբոսաշրջային երկրի հեղինակության վրա [12, էջ 38]:

Էկոզբոսաշրջության կազմակերպման համար կարևորագույն հիմնախնդիրը Էկոզբոսաշրջիկների անվտանգության ապահովումն է, որը հրամայական է դարձել հատկապես լեռնային երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում: Ամեն տարի Փրանսիայի և Ճապոնիայի լեռնային երթուղիներում 300-400 մարդ է զոհվում, իսկ Տատրաների (լեռնային զանգված Լեհաստանում և Սլովակիայում) նման ոչ մեծ լեռնային շրջանում մինչև 30 մարդ [13, էջ 67]:

ԲՀՊՏ-ներում հատուկ ուշադրության է արժանի հրդեհային անվտանգությունը: ԲՀՊՏ-ներում անհրաժեշտ է առանձնացնել անվտանգ վայրեր, որտեղ կարելի է իրականացնել այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են խարույկների վառում, ուտեստների պատրաստում, ծխախոտից օգտվել և այլն: Իսկ տարվա այն եղանակներին, որոնց ժամանակ ԲՀՊՏ-ներում առկա է չոր խոտածածկույթ, կրակի օգտագործումը պետք է խստագույնս արգելվի:

Էկոզբոսաշրջության զարգացմանը զուգընթաց շատ բուսատեսակներ, թռչնատեսակներ և կենդանիներ հայտնվել են անհետացման եզրին, որովհետև դրանք բազմատեսակ ճաշատեսակների մասն են կազմում:

ՀՀ-ում հաջորդ կարևորագույն ու տարածված հիմնախնդիրը, որն առաջանում է Էկոզբոսաշրջային գործունեությունից, վանդալիզմն է: ՀՀ շատ պատմամշակութային վայրերում մենք ականատեսն ենք լինում դրանց վրա մակագրությունների, նկարչությունների և այլ վնասների:

Քանի որ տարեցտարի աճում է Էկոզբոսաշրջիկների թվաքանակը, անհրաժեշտություն է առաջանում Էկոզբոսաշրջային զարգացած ենթակառուցվածքների ապահովում: Երբեմն վերջիններիս բացակայությունը և Էկոզբոսաշրջային կանոնների անտեսումը հանգեցնում է անդառնալի հետևանքների՝ մարդկային կորուստների տեսքով: Բացի ենթակառուցվածքային խնդիրների հաշվի առնելը, պակաս կարևոր չեն Էկոզբոսաշրջային տվյալ տարածքում անընդմեջ կրկնվող բնական երևույթները:

Չբոսաշրջության ցանկացած տեսակի հետ, այդ թվում Էկոզբոսաշրջության, խիստ կապված է հյուրանոցային տնտեսությունը, որը Էականորեն վնաս է պատճառում շրջակա միջավայրին: Այս գիտակցումը խթան է դարձել, որ աշխարհում տարածում են գտել Էկոհյուրանոցները՝ իրենց ներքին բնապահպանական քաղաքականությամբ: Էկոհյուրանոցները գտնվում են բնության գրկում, օգտագործվում են արևային վահանակներով, կահույքը վերամշակված բնական նյութերից է, իսկ հյուրանոցի ողջ տարածքում հանդիպում են աղբարկղեր՝ աղբը տեսակավորելու համար:

Չբոսաշրջության չվերահսկվող աճը երբեմն հանգեցնում է **զերզբոսաշրջության**, որը Էական վնաս է հասցնում երկրին: ՉՀԿ-ի սահմանման համաձայն՝ *զերզբոսաշրջությունը այն կետն է, երբ զբոսաշրջիկների թիվը գերազանցում է մեկնման ուղղության՝ զբոսաշրջիկներ ընդունելու կարողությունները կամ «մարդկանց առավելագույն թիվը, որը կարող է միաժամանակ այցելել՝ չվնասելով ֆիզիկական, տնտեսական և սոցիալ-մշակութային միջավայրը և չհանգեցնելով այցելուների*

բախարաբարձության անթույլատրելի անկման» [14]: Ցանկացած շուկայում գերզբոսաշրջությունը առաջացնում է համակարգային ռիսկեր, որոնք կարող են վտանգել զբոսաշրջության երկարաժամկետ աճը: Այդ ռիսկերից են.

- Օտարված և տուժված տեղաբնակներ
- Չբոսաշրջային պրակտիկայի անկում
- Գերբեռնված ենթակառուցվածք
- Բնական միջավայրի քայքայում
- Սպառնալիք մշակույթին և ժառանգությանը

Վերոնշյալ ռիսկերից Էկոզբոսաշրջության առումով առավել առանցքային են բնական միջավայրի քայքայումը և մշակութային ժառանգության սպառնալիքները: Այցելությունները տեսարժան վայրեր կարող են վնասել վայրի բնությունը, հանգեցնել լրացուցիչ աղտոտման, ինչպես նաև թափոնների վատ կառավարման: Մրա վառ ականատեսն ենք լինում Թաիլանդի Կոհ Խայ կղզին ուսումնասիրելիս: Կղզու կորպուսների 80 %-ը հիմնականում փչացվել է զբոսաշրջիկների կողմից: Իսկ արդեն այն զբոսաշրջիկները, որոնք ունեն անհարգալից վերաբերմունք մշակութային վայրերի և առհասարակ բնության նկատմամբ, առաջացնում են տեղի մշակութային հեղինակության անկում: Օր.՝ այսօր Եգիպտոսում դեպի բուրգեր տանող ճանապարհին կարելի է տեսնել KFC:

ՉՀԿ փորձագետները նշում են, որ Էկոզբոսաշրջությունն ունի զարգացման լուրջ հեռանկարներ հատկապես լեռնային երկրներում: ՀՀ ԲՀՊՏ-ներում առաջարկվող Էկոզբոսաշրջային երթուղիները շատ են ու բազմաբնույթ: Օր.՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցում առկա է 5 հիմնական երթուղի, «Դիլիջան» ազգային պարկում՝ 12, «Սևան» ազգային պարկում, «Արփի լճում», «Ձիկատար» բնապահպանական կենտրոնում՝ 4-ական, «Չանգեզուր» կենտրոնային համալիրում՝ 13, և այլն: Բայցևայնպես այս երթուղիները այսօր այդքան էլ մեծ պահանջարկ չեն վայելում, այդ իսկ պատճառով էլ քայլեր են ձեռնարկվում նոր երթուղիներ մշակելու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ՝ Էկոզբոսաշրջության զարգացման համար մեծ կարևորություն ունեն նաև պատշաճ Էկոարահեստների կառուցումը: Անհրաժեշտ է հետաքրքիր ու հազեցած երթուղիներ մշակել Էկոզբոսաշրջիկների համար, քանի որ դա թույլ կտա Էկոզբոսաշրջիկի և բնության միջև արդյունավետ ու կանոնակարգված շփման հաստատման: Էկոարահեստների կառուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել որոշակի հանգամանքներ: Նախևառաջ Էկոարահեստի երկարությունը կարող է տատանվել 0.5-1.5 կմ-ի սահմաններում, իսկ երթուղու տևողությունը՝ 0.5-1.0 ժամի:

Յուրաքանչյուր Էկոարահեստում ընդգրկված դիտարժան օբյեկտների թվաքանակը, սովորաբար, չի գերազանցում 30-ը, որոնցից յուրաքանչյուրի մասով տրվում է համապարփակ տեղեկատվություն տեղեկատվական վահանակների միջոցով:

Այսօր Էկոզբոսաշրջությունն ունի մեծ հնարավորություններ ոլորտը զարգացնելու համար ներգրավելու գյուղական համայնքները, որովհետև ցանկացած Էկոզբոսաշրջիկի հետաքրքրությունների շրջանակում մեծ տեսակարար կշիռ ունի գյուղական կյանքին ինտեգրվելը: Այդկերպ գյուղական փոքր և միջին բիզնեսի ձևավորումը ու դրան աջակցելը կենսաապահովման հնարավորություններ են առաջարկում, որի միջոցով էլ Էկոզբոսաշրջությունը կարող է ուժեղացնել իր սոցիալական ազդեցությունը:

ՀՀ գյուղական համայնքներում Էկոզբոսաշրջության ձևավորման և զարգացման մեջ աչքի է ընկնում Կալավանը, որն էլ դարձել է մեր հետազոտության ուսումնասիրության հիմնական օբյեկտը (Կալավանի վերաբերյալ ողջ ինֆորմացիան՝ ստեղծման նախապատմությունից մինչև վիճակագրական կոնկրետ տվյալներ, տրվել է Կալավան գյուղի հետազոտող Մարգարիտա Մուրադյանի կողմից):

Կալավանը ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղերից է, որն ունի հարուստ բնաշխարհ: Գտնվում է մարզի հյուսիս-արևելքում՝ Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջին, ծովի մակերևույթից 1600 մ. բարձրության վրա: Չբաղեցնում է 26.3 կմ² տարածք: Վերջին տվյալներով գյուղում բնակվում է 107 մարդ, որից 50-ը տղամարդիկ են, 57-ը՝ կանայք: Հիմնականում զարգացած է անասնապահությունը: Վերջին ժամանակներս այն մոռացված գյուղից վերածվել է Էկոզբոսաշրջային օբյեկտի: Գյուղը Էկոլոգիապես մաքուր ու անվտանգ է: Իր պատմության ընթացքում այստեղ երբեք արդյունաբերական գործարաններ չեն եղել: Կալավան այցելող Էկոզբոսաշրջիկը կհանդիպի Էկոլոգիապես մաքուր սննդի և օրգանական սերտիֆիկացիա անցած հողերի ու մեղրի:

Կալավանը Էկոլոգիապես մաքուր օրգանական գյուղատնտեսության կազմակերպման համար գերազանց պայմաններ ունի, քանի որ հետազոտությունների արդյունքում Բարեպատ գետի (Կալավանի ջրային հիմնական աղբյուրը) ջրի որակը գնահատվել է առաջին կարգի, որն ամենաբարձրն է: Գյուղի ֆլորան և ֆաունան հարուստ ու բազմազան են: Հանդիպում են վայրի մրգատուներ, մեղրատու, դեղատու բույսեր, որոնց իրացնում են տեղի բնակիչները: Ֆլորայի բազմազանությունը իր ազդեցությունն է ունեցել ֆաունայի բազմազանության վրա: Կենդանիներից այստեղ հանդիպում են գորշ արջեր, գայլեր, աղվեսներ, եղնիկներ, վայրի


կատուներ, սկյուռներ, կզաքիսներ և այլն, իսկ թռչուններից՝ մայրեհավեր, արծիվներ, բազեներ և այլն:

Կալավանի՝ որպես էկոզոոսաշրջային այցելվող օբյեկտի նախապատմությունը սկսվել է 2013 թ.-ից, երբ կալավանցի Ռոբերտ Ղուկասյանի կողմից ստեղծվում է «Թայմ Լենդ» հիմնադրամը: Վերջինիս գործունեության հիմնական նպատակը տեղի մարդկային ու բնական ողջ ներուժի բացահայտումն էր և այդ ներուժի օգտագործումը գիտակրթական և զբոսաշրջային զարգացմանն ուղղված աշխատանքներում, որն էլ ի վերջո կնպաստեր համայնքի համաչափ զարգացմանը, կենսամակարդակի բարձրացմանը: Ըստ Ղուկասյանի՝ մոտիվացված համայնքն ամենաուժեղն է, պետք է վերադարձնել կամ ձևավորել տիրոջ զգացողությունը, որ ծառեր չկտրվեն, արգելված որս չարվի

և շրջակա միջավայրը չաղտոտվի: Ուստի եթե համայնքը մոտիվացված է, ապա անկախ դժվարություններից և պետական ուշացող աջակցությունից կարելի է ավելի մեծ արդյունքներ գրանցել [15]:

2016 թ. Կալավանի զբոսաշրջային ծրագրերը ներկայացվել են Ալյասկայում անցկացվող «Արկածային զբոսաշրջության համաշխարհային համաժողովին»: Համաժողովի ընթացքում ներկայացվել են գյուղի զարգացման ծրագրերը զբոսաշրջության ոլորտում և ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, որոնց շնորհիվ հետագա տարիներին ներգնա զբոսաշրջիկների կտրուկ աճ է գրանցվել:

Կալավանի զբոսաշրջության զարգացման ծրագրի մեկնարկից՝ 2013-ից ի վեր, այցելուների դինամիկան ներկայացված է ստորև.



Գծապատկեր 3. Կալավանի այցելածների թվաքանակը 2013-2019 թթ. (կազմվել է հեղինակի կողմից)

2013-ին Կալավանն ընդունել է 60 այցելուի, 2014-ին՝ 200, 2015-ին՝ 600, 2016-ին՝ 1250, 2018-ին՝ 2000: 2017 թ. այցելուների մեծ թիվ էր կանխատեսվում, բայց գյուղում որոշում կայացվեց մեկ տարով դադարեցնել զբոսաշրջիկների ընդունելությունը՝ հյուրատնային գործունեություն սկսելու և զբոսաշրջային ենթակառուցվածքները բարելավելու նպատակով: Մեկ տարվա ընթացքում ստեղծվեցին 7 հյուրատներ, բարելավվեց անտառային խոհանոցը և այլն: Վիճակագրական վերջին տվյալները 2018-ի վերջին են հավաքագրվել, և 2019 թ. տվյալները կանխատեսված են ներկայացված՝ 2000-2500 այցելու: Կալավան են այցելում հիմնականում մեծաքանակ խմբերով՝ միջինում 15-20 հոգանոց, երբեմն հանդիպում են նաև 40-50 հոգանոց խմբեր: Կալավան այցելող զբոսաշրջիկների աշխարհագրությունը բազմաշերտ է՝ Գերմանիա, Ռուսաստան, Լեհաստան, Չինաստան, Իսրայել, Պերու, Արգենտինա, ԱՄՆ, Կանադա, Գանա և այլն:

Կալավանի տարածքը հարուստ է հնագիտական հուշարձաններով՝ ստեղծված քարի դարից մինչև ուշ միջնադար: 2005-2009 թթ. Կալավանում հայ-ֆրանսիական արշավախմբի կողմից իրականացվել են պեղումներ, որի արդյունքում հայտնաբերվել են այնպիսի եզակի հուշարձաններ, որոնցից մեկը՝ «Կալավան 1»-ը, թվագրվում է մ. թ. ա. 15000, իսկ մյուսը՝ «Կալավան 2»-ը՝ մ. թ. ա. 34200: Մյուսը գիտական մեծ արժեք են ներկայացնում ժամանակակից հնագիտության ոլորտում: Հուշարձանների մասին կան հրապարակություններ միջազգային հանրահայտ ամսագրերում [16, էջեր 39-51] և դրանք մշտապես ներկայացվում են միջազգային գիտաժողովներում [17]: Այս տեսանկյունից Կալավանը մեծ ներուժ ունի գիտական էկոզոոսաշրջության զարգացման համար:

Գյուղում իշխում է հետևյալ սկզբունքը՝ առաջ գնալ հավասարաչափ բոլոր բնակիչներով: Տեղացիներից բոլորը ներգրավված են զբոսաշրջային ծառայությունների մատուցման մեջ:

Ընդհանուր առմամբ Կալավանում կա 9 հյուրատուն, որից 7-ը պատկանում է տեղի բնակիչներին, իսկ 2-ը՝ երևանաբնակների, որոնցից մեկը մշտական հաստատվել է Կալավանում: Հետաքրքիրն այն է, որ համայնքի զբոսաշրջային զարգացմանը նպաստում են նաև արտասահմանցիները: Օր.՝ 1 գերմանացի, 1 ամերիկացի, 1 ավստրալացի տներ են գնել Կալավանում ու ակտիվորեն նպաստում են համայնքի զարգացմանը: Առկա 9 հյուրատները կարող են միաժամանակ գիշերակացով տեղավորել 45 հյուրի: 2018 թ. տվյալներով ապրիլ-հոկտեմբեր ամիսներին Կալավան է այցելել մոտ 2000 հոգի ՀՀ-ից և արտերկրից: Այցելուներից 500-ը օգտվել է հյուրատնային ծառայություններից առանց գիշերակացի, իսկ մոտ 1300-ը՝ 1 և ավելի գիշերով:

Նախքան համավարակի տարածումը կանխատեսվում էր, որ այստեղ առաջիկա 2-3 տարիներին այցելուների թվաքանակը կհասնի 3500-4000-ի (տարեկան): Ընդհանուր առմամբ համայնքը կարող է ընդունել տարեկան 6500-7000 այցելուի:

Կալավանն իր էկոզբոսաշրջիկներին առաջարկում է զբոսաշրջային այս հազեցած փայտեթղ:

1. «Մամոնա» խաղեր

Ծրագիրն իրենից ներկայացնում է քարեդարյան նախամարդու կյանքը և կենսակերպը՝ հիմնված հնագիտական ուսումնասիրությունների արդյունքների վրա: Այստեղ այցելուները հնարավորություն կունենան տեսնել այն ամենը, ինչը տեղի է ունեցել տասնյակ հազարավոր տարիներ առաջ: Այցելուները կարող են կացարաններ կառուցել, կրակ ստանալ, աշխատանքային գործիքներ պատրաստել և փորձել ապրել նախամարդու կենսակերպով: Ծրագրի թիրախային խումբը բոլորն են: Իրականացվում են ինչպես ժամանցային ծրագրեր, այնպես էլ գիտակրթական, ուսումնական միջոցառումներ: Այս ծրագիրը կարող է Հայաստանում խթանել գիտական էկոզբոսաշրջությունը՝ ներգրավելով հնագիտական, երկրաբանական, պատմական, բնապահպանական, կենդանաբանական և գիտական այլ ոլորտները: Ծրագիրը մեկնարկել է 2013 թ. սեփական նախաձեռնությամբ և կարճ ժամանակահատվածում մեծ հետաքրքրություն առաջացրել կրթական և զբոսաշրջային ոլորտներում: Նկատի ունենալով Հայաստանի հարուստ պատմությունն ու մշակույթը՝ այս ծրագիրն ունի զարգացման լայն հնարավորություններ:

2. Անտառային խոհանոց

Անտառային խոհանոց ծրագիրը Կալավանում առաջարկվող հերթական նորարարությունն է: Անտառային խոհանոցի առանձնահատկությունն այն է, որ այցելուներին առաջարկվում է բացառապես անտառային գոտի-

ներում աճող բույսերից, հատապտուղներից, մրգերից և սնկերից պատրաստված էկոլոգիապես մաքուր կերակրատեսակներ, հյութեր և թուրմեր: Կերակրատեսակների բաղադրատոմսերը կազմվել են Ճամբարակի և շրջակա գյուղերի բնակչության հարցումների արդյունքում: Կազմվել են շուրջ 85 կերակրատեսակներ, 43 տեսակի հյութեր և ոգելից խմիչքներ, 22 տեսակի թուրմեր: Որոշ բույսերից պատրաստված կերակրատեսակները գրեթե մոռացված են և նրանց վերստին օգտագործումը կնպաստի պահպանմանը և հետագա օգտագործմանը: Անտառային խոհանոցում կերակրատեսակները մատուցվում են կավե ինքնատիպ սպասքով: Այն մեծ պահանջարկ ունի ինչպես արտերկրից ժամանած զբոսաշրջիկների, այնպես էլ տեղական այցելուների շրջանում:

3. Քայլարշավներ

Կալավանում կազմակերպվում են նաև քայլարշավներ դեպի Արեգունի լեռնաշղթա, Մուրղուզ և Կարկտասար լեռները: Քայլարշավների ուղեկցումը իրականացվում է գյուղի բնակիչների կողմից: Այդ ընթացքում այցելուները ծանոթանում են Կալավանի հարակից անտառներում բնակվող կենդանիներին և թռչուններին: Քայլարշավներից բացի գյուղի բնակիչների մեքենաներով իրականացվում են նաև արտաճանապարհային տուրեր:

4. Գիշերակացի ապահովում

Կալավանում էկոզբոսաշրջության զարգացման հաջողության հաջորդ կարևոր գործոնը էկոզբոսաշրջիկին գիշերակացով ապահովումն է: Գյուղում զբոսաշրջիկներին գիշերակացով ապահովելու համար «World Vision Armenia» բարեգործական կազմակերպության աջակցությամբ ձեռք են բերվել 45 և ավել զբոսաշրջիկի համար նախատեսված վրաններ և քնապարկեր: Գյուղի բնակիչները իրենց բնակարանները տրամադրում են հանգստի, զբոսաշրջության կամ այլ նպատակներով գյուղ այցելած հյուրերին:

5. Տուրեր՝ առանց ուղեկցորդի

«Հայկական Լեռնաշխարհ» քայլարշավների թվային երթուղիների կառուցումն ու քարտեզագրումը նպաստում են առանց ուղեկցողների անցնել բոլոր արահետներով և տեղեկություններ ստանալ երթուղու շրջակայքում գտնվող բոլոր հետաքրքրաշարժ վայրերի մասին: Կալավանում տեղադրված այդ ցուցանակն իր մեջ պարունակում է 6 հիմնական երթուղիներ՝ 55 կմ ընդհանուր երկարությամբ:

Կալավանի էկոզբոսաշրջության զարգացման համալիր վերլուծության նպատակով իրականացրել ենք SWOT վերլուծություն, որը բերված է ստորև.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Էկոզբոսաշրջային բազմատեսակ ռեսուրսներ • Էկոզբոսաշրջային հարուստ փաթեթի առկայություն • Օրգանական տնտեսություն • Մարդկային և բնական մեծ ներուժ • Մոտիվացված համայնք • Բնակչության հյուրընկալություն 	<ul style="list-style-type: none"> • Գազամատակարարման բացակայություն • Ճանապարհային թերզարգացած ցանց • Մանրածախ առևտրի կետերի բացակայություն • Չմեռային տուրերի բացակայություն • Ճանաչելիության խնդիր
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ul style="list-style-type: none"> • Գիտական էկոզբոսաշրջության զարգացման մեծ ներուժ • Համայնքափոխ զբոսաշրջության (Community based tourism) զարգացում • Աշխատատեղերի ստեղծում • Չբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում • Ներուժի, բնական և մարդկային ռեսուրսների առավելագույն օգտագործում • Պայմանավորված բարձրադիր վայրում տեղկայմամբ՝ աստղադիտումների անցկացում 	<ul style="list-style-type: none"> • Համավարակի ահագնացող տեմպերը • Աղբբեռնաձևական ագրեսիայի հնարավոր ռիսկեր • Արտագաղթի վտանգ • Ֆինանսատնտեսական ճգնաժամ

Գծապատկեր 4. Կալավանի էկոզբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն

ՈՒՀ – Այսպիսով ինչպես էկոզբոսաշրջային այցելությունների ան, այնպես էլ էկոզբոսաշրջության տարատեսակների առաջխաղացում (օր.՝ զարգացնել արկածային զբոսաշրջությունը, ագրոզբոսաշրջությունը)

ՈՒՄ – Խթանել ներքին զբոսաշրջությունը, թշնամական անակնկալ ագրեսիայից ելնելով՝ մշակել զբոսաշրջային այնպիսի պրոդուկտներ (հուշանվերներ, կերակրատեսակների արտահանում և այլն), որոնք հասանելի կլինեն զբոսաշրջիկներին նաև Կալավանից դուրս

ԹՀ – Սկսել արևային վահանակների կիրառումը, խրախուսել անտառային խոհանոցը

ԹՄ – Կառուցել նոր հյուրատներ կամ այլ ՀՏՕ-ներ (հյուրանոցային տնտեսության

օբյեկտ) զբաղվածության խթանման նպատակով, որը կկանխի արտագաղթը

Վերջին տարիներին զարգացող էկոզբոսաշրջությունը միակ շահույթ գեներացնող գործունեությունն է Կալավանում, քանի որ բիզնեսի այլ տեսակներ այստեղ չեն գործում (չկա անգամ գործող մթերային խանութ)։ Էկոզբոսաշրջիկները սնվում են էկոլոգիապես մաքուր անտառային ճաշատեսակներով, որը կազմակերպվում է տեղի կանանց կողմից։

Կալավանի պարագայում տիպական է ուժեղ և թույլ կողմերի համադրությունը վերածել մրցակցային առավելության։

Կալավանում չկա գազամատակարարում, և վերջինս, լինելով թույլ կողմ, տեղացիները վերածել են հնարավորության, քանի որ այդտեղ շուտով զարգացում է ապրելու արևային էներգետիկան (որոշ ընտանիքներում արդեն կիրառվում են արևային վահանակներ)։

Կալավանի առջև ծառայած գերխոչընդոտը ճանապարհային վատ ցանցն է, որի երկարությունը 7 կմ է։ Տարբեր ժամանակներ պետական կառավարման մարմիններից այցեր են եղել այստեղ, բայց և այնպես այդ տեսանկյունից որևէ դրական տեղաշարժ մինչև օրս չկա։

Հաշվի առնելով իրականացված SWOT վերլուծությունը՝ կարող ենք ասել, որ Կալավանում էկոզբոսաշրջությունը զարգացնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

- Բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները, այդ թվում՝ ճանապարհային ցանցը,
- Մշակել երթուղիներ, զբոսաշրջային գրավիչ փաթեթներ ձմեռային տուրերի անցկացման համար,
- Համագործակցել զբոսաշրջային գործակալությունների, տուրօպերատորների հետ,
- Կազմակերպել իրագեկման արշավներ Կալավանի զբոսաշրջային պրոդուկտը պոտենցիալ շուկային հասանելի դարձնելու համար։

Կալավանը էկոզբոսաշրջային այլընտրանքային մոդելի օրինակ է ՀՀ այն համայնքների համար, որոնք ունեն էկոզբոսաշրջային լուրջ ներուժ, անհրաժեշտ ռեսուրսներ, բայց արդյունավետորեն չեն օգտագործում։ Կալավանի զարգացման մոդելը հետևյալն է՝ տեղական մարդկային և բնական ողջ ներուժի բացահայտում և ներկայանալի պրոդուկտի վերածում։

ՀՀ էկոզբոսաշրջային ներուժը խիստ բարձր է և գնալով էկոտուրերը մեծ պահանջարկ են վայելում զբոսաշրջիկների համար (անկախ համավարակի գոյությունից)։ ՀՀ-ն իդեալական ուղղություն է ներգնա այն զբոսաշրջիկների համար, որոնք արդեն վայելել են էկոզբոսաշրջային հայտնի օբյեկտները, և նպատակ են

հետապնդում բացահայտել փոքր, բայց կլիմայական 6 գոտի ունեցող Հայաստանը: Վերջինս էլ ավելի է խթանում էկոզբոսաշրջության զարգացումը ՀՀ-ում, քանի որ այցելելով Հայաստան՝ զբոսաշրջիկը միանգամից տարբեր ռելիեֆների ու լանդշաֆտների ակնատեսքը կարող է լինել. տպավորություն կստեղծվի, որ մի քանի երկիր է այցելում մեկ ճանապարհորդության ընթացքում:

Յուրաքանչյուր պետության համար ԲՀՊՏ-ները ունեն լուրջ դերակատարում էկոզբոսաշրջության զարգացման մեջ: Ուստի հենց այս օբյեկտներն էլ պետք է հատուկ ուշադրության արժանանան պետության կողմից՝ արագորեն արձագանքելով ԲՀՊՏ-ների գործունեությունը խաթարող գործոններին:

Ներկայումս ԲՀՊՏ-ների գործունեության մեջ խիստ կարևորվում են.

- ԲՀՊՏ-ներում էկոզբոսաշրջության ռազմավարության մշակում և ներդրում,
- ԲՀՊՏ-ների նկատմամբ կենտրոնական վերահսկողական համակարգի ներմուծում,
- ԲՀՊՏ-ների ենթակառուցվածքների, կիրառվող սարքավորումների և պարագաների վերապրոֆիլավորում և բարեկարգում, անհրաժեշտության դեպքում՝ ներմուծում,
- Համապատասխան վերապատրաստում անցնելուց հետո էկոզբոսաշրջության կառավարման անձնակազմի ներդրում:

Արդեն նշեցինք, որ էկոզբոսաշրջության զարգացման կարևոր նախադրյալներ են պատշաճ էկոարահետները, որոնք գրավիչ և ճիշտ կառուցելու համար անհրաժեշտ է.

- Իրականացնել տարածքի համակողմանի ուսումնասիրություն՝ կազմելով երթուղու հիմնական կանգառների բնութագիրը,
- Ըստ հնարավորության՝ շրջակա միջավայրը քիչ ենթարկել փոփոխության,
- Վերացնել արահետի բոլոր խոչընդոտները՝ խուսափելով ծառահատումներից, խոտածածկի ամբողջովին ոչնչացումից,
- Հնարավորության դեպքում էկոարահետը կառուցել ոլորանների տեսքով՝ այդպես այն առավել գրավիչ ու հետաքրքիր դարձնելով էկոզբոսաշրջիկի համար:

«Էկոզբոսաշրջության զարգացման հնարավորությունները ՀՀ-ում» իրականացված հետազոտության արդյունքում մենք հանդես ենք գալիս առաջարկությունների հետևյալ փաթեթով.

- Սահմանել վերահսկողություն ՀՀ ազգային պարկերի նկատմամբ՝ հյուսիսամերիկյան ազգային պարկերի կառավարման փորձը տեղայնացնելով ՀՀ-ում (ազգային պարկերի կառավարման լիազորությունները պատվիրակել մի քանի կազմակերպությունների, ավելի բարդ կառավարման դեպքում՝ նաև տեղի բնակչությանը), մինչդեռ ՀՀ-ում տեղի

բնակչությունը չի մասնակցում ԲՀՊՏ-ների կառավարմանը (Հայաստանում ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը և բնության պահպանությամբ զբաղվող մի քանի ՊՈԱԿներ),

- Ձևավորել կամավորական խմբեր, որոնք կզբաղվեն ՀՀ ԲՀՊՏ-ների ամբողջականացման պահպանմամբ,
- Էկոզբոսաշրջային այցելությունները ԲՀՊՏ-ներ սահմանափակել միայն որոշակի հատվածներում՝ խուսափելով էկոզբոսաշրջիկների՝ տեղանքին հասցված բացասական ազդեցությունից (տեղայնացնել Քենիայի օրինակը, որտեղ գտնվող «Ամբոսելի» ազգային պարկում էկոզբոսաշրջային այցելությունների 90 %-ը տեղի է ունենում ազգային պարկի 10 %-ի վրա, որպեսզի էկոզբոսաշրջիկի բացասական ազդեցությունը հնարավորինս նվազեցվի),
- Ապամոնտաժել այն օբյեկտները (գվարճանքի, սննդի և այլն), որոնք կառուցված են էկոզբոսաշրջության օբյեկտներին անմիջապես մոտ, և որոնց շահագործումը խաթարում է տեղանքի բնության անաղարտությունը, վնաս է պատճառում բուսական և կենդանական աշխարհներին,
- Էկոզբոսաշրջային օբյեկտներում որոշակի հեռավորության վրա տեղակայել ուղեցույցներ, նստարաններ, ցայտաղբյուրներ, էկոզուգարաններ, աղբամաններ,
- ՀՀ էկոզբոսաշրջային ներուժ ունեցող համայնքներում կառուցել էկոտներ, էկոհյուրանոցներ,
- Համաշխարհային շուկայում ճանաչելիություն և հետևապես զբոսաշրջային հոսքեր ապահովելու նպատակով ձեռք բերել կայուն զբոսաշրջության սերտիֆիկացիա, ինչի շնորհիվ կապահովվի ՀՀ անդամակցությունը բնապահպանական միջազգային միություններին, գովազդ տեղադրելու հնարավորություն միջազգային էկոզբոսաշրջային հրատարակություններում,
- ՀՀ էկոզբոսաշրջային օբյեկտներում տեղադրել տեղեկատվական հատուկ վահանակներ վայրի աշխարհագրական կոորդինատների վերաբերյալ, որոնք կուղղորդեն զբոսաշրջիկներին տուրերի ընթացքում (դրանք կա՛մ բացակայում են, կա՛մ բավականին հին են և կարիք ունեն բարեկարգվելու),
- Պատրաստել, վերապատրաստել ոլորտի մասնագետներին, էկոզբոսաշրջային ծառայություններ մատուցողներին՝ ընդհանուր հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով, իսկ էկոզբոսա-

վարների համար մշակել ուսումնական հատուկ ծրագրեր,

- Բարեկարգել դեպի Էկոգրոսաշրջային օբյեկտներ տանող ճանապարհային ցանցերը, օր.՝ դեպի Կալավան տանող ճանապարհը, Դիլիջան ազգային պարկում դեպի շատ պատմամշակութային կոթողներ տանող ճանապարհները և այլն,
- Վանդալիզմի կանխման նպատակով իրականացնել վերահսկողություն պատմամշակութային վայրերի նկատմամբ, սահմանել խիստ պատժամիջոցներ վանդալների նկատմամբ (ՀՀ պատմամշակութային վայրերի մեծ մասը ենթարկված է և շարունակում է ենթարկվել վանդալիզմի),
- Վերջապես կարճաժամկետում ներուժային ռեսուրսները վերածել Էկոգրոսաշրջային կոնկրետ փաթեթների:

Այսօր ՀՀ հասարակությունը պետք է գիտակցի բնության պահպանման անհրաժեշտությունը, իսկ Էկոգրոսաշրջությունը խթան դառնա մարդկանց աշխարհաճանաչողության գործում:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանը ունի Էկոգրոսաշրջային լուրջ ներուժ, և ՀՀ համայնքներում Էկոգրոսաշրջությունը զարգացնելու համար անհրաժեշտ է.

- Բացահայտել տեղի մարդկային և բնական ողջ ներուժը,
- Ներգրավել տեղացիներին, տեղի ռեսուրսների ողջ համախումբը,
- Ավանդույթները վերածել պրոդուկտի, իսկ առկա խոչընդոտները՝ հնարավորության:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Սելվինազյան Բ. Ս., Հաջոյան Ռ. Մ.,** Զբոսաշրջության մարքեթինգ, 2003.
2. **Budějovice Č.,** Trends in World Tourism as a Chance of Rural Tourism Development, 2007.
3. **Тарасенок А. И.,** Бизнес в агро- и экотуризме, 2014.
4. Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի և «Կանաչ աշխարհ» կազմակերպության կողմից մշակված

5. «Կայուն զբոսաշրջության զարգացման» հայեցակարգ, որն ընդունվել է 1992 թ.
6. «Making Tourism More Sustainable - A Guide for Policy Makers», UNEP and UNWTO, 2005
7. <https://ecoclub.com/news/085/interview.html>
8. **Մարտիրոսյան Լ., Ավագյան Ա.,** Էկոգրոսաշրջությունը Հայաստանում, 2018.
9. <http://www.mnp.am/am/pages/262>
10. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք, 2006 թ.
11. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166>
12. Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030 թթ., 2019:
13. **Храбовченко В. В.,** Экологический туризм. - М. «Финансы и статистика», 2007.
14. <https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284420070>
15. <https://champord.am/kalavan-poqr-gyuxi-mec-brashq/>
16. **R.Ghukasyan, D. Colonge, S.Nahapetyan, V.Olivier, B.Gasparyan, H.Monchot and Ch. Chataigner,** Kalavan-2 (North of Lake Sevan, Armenia): a new Late Middle Palaeolithic site in the Lesser Caucasus, 2010, in Archaeology, Ethnology & Anthropology of Eurasia 38/4 (2011)
17. **Adrian BALASESCU (1), Boris GASPARYAN (2), Jérémie LIAGRE (3) and Christine CHATAIGNER (4),** 9th Meeting of ASWA 15-20 November 2008 Al Ain, Abu Dhabi emirate, United Arab Emirates: The fauna from Kalavan 1 (Upper Palaeolithic/Epipalaeolithic, Armenia).
18. Green Global Travel, «What is Ecotourism? The History and Principles of Responsible Travel» article
19. **David A. Fennell and Ross K. Dowling,** Ecotourism Policy and Planning, 2003
20. **Allcock A.,** Commonwealth of Australia, National Ecotourism Strategy, 1994
21. **Yuliza Curvelo Vidal,** Ethno-Ecotourism: A Sustainable Development Tool to Construct Governance with the Wayuu People in La Guajira, Colombia, 2012

Տճանա/Հանձնվել է 09.09.2021
 Рецензирована/Գրախոսվել է 16.09.2021
 Принята/Ընդունվել է 23.09.2021